ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5. 1954 Общественные науки

Արտ. Ռոկերյան

ՆԱՒՐԻ ՉԱՐՅԱՆԻ 20-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Դիտողություններ)

Ն. Զարյանը սովետահայ գրականության ականավոր դեմքերից է։ Նա մեկն է այն առաջատար գրողներից, որոնք իրենց զգում են կապված մեր երջանիկ կյանքի ու հերոսական ժամանակների հետ, իրենց ստեղծագործության մեջ աշխատում են արտացոլել այդ ժամանակն ու այդ կյանքը և նրա հետ միասին ու նրա բարերար հովանու տակ աճում ու հասունանում են, զարգացնելով իրենց գրական տաղանդը։

Ճիշտ է, Ն. Զարյանը գրական փորձեր կատարել է նախքան Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, մինչև 1920 թվականի նոյեմբերը, գրել է գերազանցապես լիրիկական, հայրենասիրական բնույթի ոտանավորներ, առանձին դեպքերում տուրք տալով ժամանակի հետադեմ մտայնությանը, բայց որպես գրող, որպես գրական դեմք նա ձևակերպվել է սովետական տարիներին և ամբողջ էությամբ, ստեղծագործական ամբողջ բազմազանությամբ, նա սովետական կյանքի արդյունք է, նրա ծնունդը, նրա դաստիարակածը։

Սովետական իրականության հետ սերտ կերպով կապվելու նրա անկեղծ և ուժեղ ձգտումը, սովետական գաղափարախոսությունը յուրացնելու և այն իր ստեղծագործությունների մեջ դրսևորելու վառ ցանկությունը, խաղացել են իրենց վճռական դերը՝ նրա գրական ընդունակությունների զարգացման և տաղանդի վերջնական ձևավորման գործում։

Ն. Զարյանի գրիչը բեղմնավոր է և օժտված է ստեղծագործական բազմազանությամբ։ Նա գրել է քաղաքացիական ուժեղ շունչ ունեցող բանաստեղծություններ և էպիկական պոեմներ, նա բանեցրել է սատիրական մտրակը և ստեղծել կոլտնտեսային կյանքը պատկերող տաղանդավոր վեպ, նա գովերգել է քաղաքացիական կռվի հերոսներին և փառաբանել սովետական ժողովուրդների անօրինակ սխրագործությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, արտահայտելով նրանց վառ հավատն ու վճռական կամքը հաղթանակի նկատմամբ, սովետական բոցավառ, կենսատու հայրենասիրությունը։ Հայրենական պատերազմը բացահայտեց Ն. Զարյանի տաղանդի մի այլ կողմը՝ դրամատիկորեն մտածելու նրա ընդունակությունը։ Ռազմաշունչ բանաստեղծությունների ու մարտական պոեմների հետ միասին նա գրեց դրամաներ, դրամատիկական պոեմներ, հետագայում անցնելով կոմեդիայի ժանրին։

Պատերազմի տարիներին մարտականորեն շնչող բանաստեղծի ձայնը չթուլացավ հետպատերազմյան շրջանում։ Նա ներդաշնակորեն միաձուլվեց խաղաղ շինարարության, հետպատերազմյան հնգամյակների աշխատանքային վիթխարի սիմֆոնիային, ընդունելով նոր երանգ, ստեղծագործական նոր շեշտ։ Այդ շրջանում նա ավարտեց «Հացավան» վեպը, գրեց «Աղբյուրի մոտ» ու «Փորձաղաշտ» կոմեդիաները և մի շարք բանաստեղծություններ։

Նաիրի Զարյանը բայլում է մեր ժամանակի հետ, նրա ստեղծագործությունների մեջ մենք զգում ենք մեր օրերի զարկերակը և պայքարի խինդը։

Ն. Զարյանի ստեղծագործությունների պաֆոսն էլ հենց դա է՝ սովետական ժողովրդի մաքառումները, աշխատանքային խանդավառությունը, դեպի կոմունիզմի լուսավոր բարձունքները ձգտող նրա անհողդողդ կամքն ու անխորտակ վճռականությունը։

Սովետական ժողովրդի այդ ուղին լուսավորված է Կոմունիստական պարտիայի իմաստությամբ՝ մարքսիզմ-լենինիզմի անպարտելի ուսմունքով։

Զարյանը պարտիական գրող է, նրա ստեղծագործությունների հիմնական էությունը, նրա լավագույն երկերի կարևորագույն առանձնահատկությունը իսկ պարտիականությունն է, որն արտահայտված է սովետական կենսատու հայրենասիրության մեջ, դեպի մեր մեծ Հայրենիքն ունեցած վառ սիրո ու դեպի նրա թշնամիները տածած կրակոտ ատելության մեջ։ Նա չի պատկանում գրական միջավայրի այն պասիվ մարդկանց թվին, որոնք պարփակված իրենց գրասենյակներում, նրա նեղ ու սահմանափակ պատուհաններից են դիտում կյանքը, մեր իրականությունը, հեռու պահելով իրենց այդ կյանքի ու այդ իրականության հետ կապված հուզող հարցերից ու կուլտուրական շինարարության համար մղվող պայքարից։ Ն. Զարյանը ոչ միայն իր գրական ստեղծագործություններով, այլև հոդվածներով ու հրապարակախոսական ելույթներով, ակտիվ կերպով պայքարել է սովետական գրականության արագ և անկաշկանդ զարգացման համար՝ ընդդեմ նրա բոլոր տեսակի թշնամիների և ամենից առաջ բուրժուական նացիոնալիստների։

Գրական գործունեության ընթացքում, ինչպես նաև գրական պայքարի մեջ նա թույլ է տվել առանձին սխալներ և ստեղծել է անհաջող գործեր, բայց հիմնականը ակտիվ պայքարն է պարտիայի գծի և գրականության, կոմունիստական պարտիականության համար։

Ն. Զարյանն ապրում է գրական հասունության ու ստեղծագործական բնդունակությունների դրսևորման շրջանում։

Նա հեղինակ է այնպիսի երկերի, որոնք հաստատ տեղ են գրավել սովետահայ գրականության պատմության և ընթերցողների հիշողության մեջ։ Նրա «Մուշանի քարափը», Ստալինին նվիրված բանաստեղծությունները, «Զայն հայրենական» պոեմը, «Հացավանը» և շատ ուրիշ գործեր, լինելով սոցիալիստական ռեալիզմի ցայտուն արտահայտությունները, կարևոր տեղ են գրավում նաև Սովետական Միության բազմազգի գրականության մեջ։ Ն. Զարյանի ստեղծագործությունները՝ բանաստեղծություններն ու պոեմները, վեպը՝ մի քանի անգամ հրատարակվել են ռուսերեն և դարձել սովետական բոլոր ժողովուրդների սեփականությունը։ «Հացավանը» վեպը թարգմանվել է նաև նոր դեմոկրատիայի երկրների մի շարք լեզուներով։

Ն. Զարյանը նոր պայմաններում շարունակում է հայ կլասիկ գրականության լավագույն տրադիցիաները և զարգացնում այն։ Նրա ստեղծագործական խառնվածքին հատուկ է բազաբացիական ռեալիստական պաֆոսը, որն իր սկիզբն առնում է Հակոբ Հակոբյանի մարտական պոեզիայից և էպիկական շունչը, որը նրան մոտեցնում է Հովհ. Թումանյանի արվեստին։ Եվ այդ երկու տարրերի՝ բազաբացիական ակտիվ տեմպերամենտի և էպիկական հանգստության միաձուլումը հանդիսանում է Ն. Զարյանի տաղանդի հիմնական առանձնահատկությունը, նրա գրական խառնվածքի էական կողմը։

Ն. Զարյանը, համեմատած իր առաջին շրջանի (1920—1930 թթ.) ստեղծագործությունների հետ, հսկայական առաջխաղացում է կատարել, անընդհատ զարգացել ու կատարելագործվել է։ Դա կենսունակ տաղանդին հատուկ գիծ է։

Գրականության պատմությունից հայտնի է, որ շատ գրողներ կարճատև կյանք են ունեցել, հանդես են եկել իրենց առաջին, քիչ թե շատ նշանավոր գործերով և այնուհետև գրական ամլության մատնվել, ընդմիշտ լռել է նրանց մուսան, կամ աննշան հնչյուններ արձակել։ Այդպիսի տաղանդները շատ շուտ են սպառում իրենց և որպես մետեորներ փայլատակում ու անցնում են, թողնելով որոշակի հետք իրենց ետևից։ Հայ գրողներից այդպիսի տաղանդների թվին կարելի է դասել Սմբատ Շահազիզին, Դոդոխյանին, Վ. Միրաքյանին և Հովհ. Հովհաննիսյանին։ Բայց կա և տաղանդի մի այլ տեսակ, այլ խառնվածք, որը մենք պայմանական ձևով անվանում ենք կենսունակ և բազմակողմանի տաղանդ։ Այդ խառնվածքի գրողները մի շնչում չեն սպառում իրենց, նրանք անընդհատ աճում ու զարգանում են, բացահայտում են իրենց տաղանդի տարբեր կողմերն ու հատկանիշները, նրանք գրավում են գրական մի բարձունք մյուսի հետևից և մինչև կյանքի վերջն աշխատում են, ստեղծագործում. նրանք ունեն ասելիք և գիտեն ինչպես ասել այն։ Եթե կյանքի դառն պայմանները կամ պատահական դեպքերը կատաստրոֆիկ ազդեցություն չեն ունենում, անժամանակ ընդհատում նրանց կյանքի թելը, չթողնելով ասել վերջին խոսքը,— այդ դեռևս չի նշանակում, որ այդպիսի տաղանդները միակողմանի են։ Բնավ ոչ։ Նրանք համապարփակ մեծություններ են, որոնք հավասարապես մեծ արժեքներ են ստեղծում գրական տարբեր բնագավառներում՝ բանաստեղծության, արձակի, դրամատուրգիայի, քննադատության մեջ։ Այդպիսի համապարփակ և ներդաշնակ հանճարներից է Ա. Պուշկինը։ Հայ գրականության պատմության մեջ թերևս միայն Հով. Թումանյանն է մոտենում ստեղծագործական այդ խառնվածքին։

Ճիշտ է, նա չհասցրեց իր խոսքն ասել դրամատուրգիայի բնագավառում, բայց իր փայլուն լուման մտցրեց բանաստեղծության տարբեր ժանրի, ինչպես նաև արձակի ու քննադատության մեջ։ Նրա պոեմներն իրենց ներքին բովանդակությամբ և կյանքի իրական նկարագրությամբ, հեշտությամբ կարող են փոխարինել մեծածավալ վեպերի, նա մնում է լիրիկայի լավագույն վարպետներից մեկը։ Նրա պարզ ու պայծառ արձակը, պատմվածքներն ու իմաստուն հեքիաթները, վաղուց արդեն պատվավոր տեղ են գրավել հայ գրականության մեջ։ Իսկ ինչ վերաբերում է նրա քննադատական հոդվածներին՝ դրանք նախասովետական շրջանի հայ քննադատական մտքի ցայտուն արտահայտություններից են, այն լավագույններից, որ կա նախամարքսյան և հայ քննադատության մեջ։

Նարիր Զարյանն իր ստեղծագործական խառնվածքով մոտենում է գրական տաղանդների այն խմբին, որն անվանեցինք կենսունակ և բազմակողմանի։ Մենք սրանով բնավ չենք ուզում նույնացնել նրա տաղանդը Հովհ. Թումանյանի տաղանդի հետ կամ հավասարեցման նշան դնել նրանց միջև։ Բնավ ոչ։ Մեր խոսքը ստեղծագործական խառնվածքի մոտավոր նմանության, բայց ոչ նույնության մասին է։ Եթե նույնիսկ նրանց տաղանդները հավասար լինեին, նույնը լինել չէին կարող, այն պարզ պատճառով, որ Հովհ. Թումանյանն ու Նարիր Զարյանը տարբեր ժամանակաշրջանների և տարբեր հասարակական-քաղաքական հարաբերությունների ծնունդ են։ Եվ այդ հանգամանքը, ինչպես

հետո կտեսնենք, իր խոր կնիքն է դրել այդ երկու հեղինակների ստեղծագործության վրա, պայմանավորելով նրանց աշխարհայացքը և գրական կերպարներն ու պատկերները։ Իսկ այժմ անհրաժեշտ է նշել, որ Ն. Զարյանը սովետահայ այն գրողներից է, որը ոչ միայն բեղմնավոր գրիչ ունի, այլև բազմակողմանի ընդունակությունների տեր է։ Նա արդեն աչքի ընկնող արժեքներ է ստեղծել քաղաքացիական լիրիկայի, պատմական ու արդիական կյանքն արտահայտող պոեմների մեջ, արձակի ու դրամատուրգիայի ասպարեզում։ Եվ բոլոր այդ ժանրերում նա հանդես է եկել որպես սոցիալիստական ռեալիզմի ներկայացուցիչ, որպես պոետ-տրիբուն և գրող-քաղաքացի, որպես սովետական հայրենասեր։

Նա զգալի գործ է կատարել նաև որպես թարգմանիչ։ Ն. Զարյանն աճել է ռեալ հողի վրա, նա անմիջական շփման մեջ է եղել իր գրչակից ընկերների հետ, սովորել է ոչ միայն հայ, ռուս հարուստ կլասիկ գրողներից (նա իրավացիորեն Պուշկինին և Թումանյանին համարում է իր գրական ուսուցիչները), այլև իր գրչակից ընկերներից, սովետական գրողներից, առաջին հերթին՝ ռուս սովետական գրականությունից։ Նրա ստեղծագործությունների ձևավորման գործում կարևոր դեր են խաղացել ոչ միայն Մաքսիմ Գորկին ու Հակոբ Հակոբյանը, այլև Մայակովսկին ու Չարենցը, Ջամբուլն ու Սուլեյման Ստալսկին, Շոլոխովն ու Ֆադեևը։ Եվ, չնայած այդ ստեղծագործական մղումներին ու ներշնչումներին, Ն. Զարյանը մնացել է ինքնատիպ և ինքնուրույն գրող իր ստեղծագործության բոլոր առավելություններով ու թերություններով հանդերձ։ Մինչև այդ ինքնատիպության հասնելը, նա անցել է հետաքրքիր և շատ կողմերով ուսանելի ստեղծագործական ուղի, նա ունեցել է որոնումների ու գրական վարանումների շրջան, մինչև որ կանգնել է սոցիալիստական ռեալիզմի մեծ գրականության զարգացման գլխավոր ճանապարհի վրա, տեսնելով նրա հոյակապ ներկան ու պայծառ ապագան։

Այդ հանգամանքը ճիշտ արժեքավորելու և նրա ստեղծագործական զարգացումը ճիշտ գնահատելու համար, անհրաժեշտ է մեր հայացքը դարձնել պատմության կողմը, Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիները, այն շրջանը, երբ Ն. Զարյանը հանդես եկավ իր առաջին գործերով, որպես սովետական գրող, որպես նոր կյանքի ու նոր մարդկության երգիչ։

Այս հոդվածի նպատակն է բնութագրել Ն. Զարյանի 20-ական թվականների ստեղծագործությունը, որն օրգանապես կապված է հետագա շրջանի նրա ստեղծագործությունների հետ։

1

Նաիրի Զարյանն իր բուն գրական գործունեությունն սկսում է Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու հենց առաջին տարիներին՝ 1921—1922 թվականներին. «Մուրճ» ամսագրում և այլ պարբերականներում տպագրվում են նրա սովետական առաջին բանաստեղծությունները, որոնք հետո հրատարակվում են առանձին գրքով՝ «Զրանցքի կապույտ երկրում» (1926) վերնագրի տակ։

Այդտեղ ամփոփված են հեղինակի 1922—1924 թթ. գրած բանաստեղծությունները։ Դրանք աչքի են ընկնում իրենց թեմատիկայի ակտուալությամբ

և ցույց են տալիս երիտասարդ բանաստեղծի սերն ու ձգտումը՝ արձագանքելու կյանքի հուզող հարցերին, համաքայլ ընթանալու սովետական իրականության հետ։

Բանաստեղծությունների հիշյալ գիրքն ունի հետևյալ բնորոշ բաժինները՝ ա) «Ջրանցք — էլեկտրիֆիկացիա», բ) «Սայլից — սավառնակ», գ) «Դուքանից — կոոպերացիա» և դ) «Երեսներս դեպի գյուղ»։ Այս թեմաների շոշափումն ինքնին արդեն վկայում է այն մասին, թե ինչ ուղղությամբ է մտածում գրողը և ինչ հարցեր են նրան հուզում ու անհանգստացնում արդեն այն ժամանակ, իր ստեղծագործության արշալույսին։

Սովետական կյանքի, իրականության հետ կապվելու այդ ձգտումը եղել է այն հիմնական զսպանակը, այն վճռական պատճառը, որ նպաստել է բանաստեղծի տաղանդի զարգացմանը և վարպետության կատարելագործմանը։

Երբ մեր օրերի բարձրությունից նայում ենք Ն. Զարյանի «Ջրանցքի կապույտ երկրում» ժողովածուի մեջ ամփոփված բանաստեղծություններին և համեմատում ենք դրանք նրա վերջին տասնամյակների ստեղծած երկերի հետ, նկատելի է ուժեղ տարբերություն, նրա տաղանդի ուժը և արվեստի հասունությունն առաջին գրքի հետ համեմատած, ակնբախ է դառնում։ Որոշ առումով անհավատալի է թվում այն հանգամանքը, որ «Ռուշանի քարափի», «Երկու հանճարեղ գլխի», «Արա Գեղեցիկի», «Հացավանի» հեղինակ Ն. Զարյանը տարիներ առաջ հանդիսացել է «Ջրանցքի» բանաստեղծությունների հեղինակը, այնքան մեծ է կոնտրաստը, այնքան տարբեր են նրանք իրենց գաղափարական խորությամբ ու գեղարվեստական ձևով։

Չնայած այն որոշակի տարբերությանը, որ նկատելի է բանաստեղծի առաջին (երիտասարդ) և հասուն շրջանի ստեղծագործության միջև, այնուամենայնիվ, կա ինչ որ ներքին օրինաչափություն, տրամաբանական մի կապ, որը միացնում է այդ շրջաններն իրար հետ, և ամբողջացնում հեղինակի ստեղծագործական դեմքը։

Ն. Զարյանի ստեղծագործական երկու կարևոր առանձնահատկությունը՝ քաղաքական նպատակասլացությունը և էպիկական ուժը, որոնք հաճախ հանդես են գալիս միաձուլված, նկատելի են արդեն նրա առաջին շրջանի (1922—1929 թթ.) ստեղծագործությունների մեջ։

«Ջրանցքի կապույտ երկրում» ժողովածուն, ինչպես արդեն նշել ենք, ակտուալ է, այժմեական իր թեմատիկայով։ Հեղինակն իրեն նպատակ է դրել երգել, որպես նոր կյանքի ատրիբուտներ, Հայաստանի ջրանցքների կառուցումը և էլեկտրիֆիկացումը («Շիրակի ջրանցքը», «Վերջին թունելում», «Զանգու» և այլն), կոոպերացիայի նվաճումները («Գյուղացին», «Դուքանչին» և այլն), կոմերիտմիության գործունեությունը գյուղի լուսավորության գործում («Կոմերիտական երգ» և այլն) և, վերջապես, սավառնակների հաղթանակը սայլերի նկատմամբ («Այրոկարոտ», «Այրոկամք», «Սելվորը»)։

Այս բոլոր բանաստեղծությունների միջով կարմիր թելի նման անցնում է հնի և նորի հակադրության գաղափարը։ Կոոպերացիան հակադրվում է դուքանչուն, սավառնակը՝ սայլին, էլեկտրականությունը և ընդհանրապես մեքենայացումը՝ գյուղացու քաշող ուժին, նոր կյանքը և կենցաղը՝ հին կյանքին ու կենցաղին։

Եվ դա բնական է, եթե նկատի ունենանք, որ նրա այդ շրջանի բանաստեղծությունները գրված են Հայաստանում սովետական կարգեր հաստատելուց

անմիջապես հետո։ Նորի, սովետականի պայքարը՝ հին կենցաղի, հասկացողությունների, բարոյական նորմերի և ընդհանրապես աշխարհայացքի դեմ՝ այդ շրջանում ընդունում էր արտահայտության շատ սուր ձևեր և այդ պայքարի միջոցով՝ հաղթանակում էր նորը, սովետականը, գրավելով իր հաստատուն դիրքերը։ Սովետահայ գրականության առաջին շրջանի ստեղծագործությունների լեյտմոտիվը, հիմնական թեման եղել է նոր, ռևոլյուցիոն սկզբունքի հակադրությունը կործանման ու մահվան դատապարտված հին կյանքի, փտած սովորությունների ու սկզբունքների դեմ։

Ն. Զարյանը բացառություն չի կազմում՝ մեր գրականության համար ընդհանուր այդ պրոցեսի մեջ։ Բայց նա իր յուրահատուկ մոտեցումն ունի այդ հարցի նկատմամբ։ Նրա մոտ հնի և նորի պայքարը գրավում է կենտրոնական տեղ և նա հանդես է գալիս որպես նորի, սովետականի խանդավառ պաշտպան, ավելի ուժեղ, քան նրա ժամանակակից շատ այլ սովետական գրողներ։

Երիտասարդ հեղինակի այդ սերտ կապվածությունը սովետական առօրյայի հետ, նրա ձգտումը համաքայլ ընթանալու հաղթանակող նորի հետ,— հանդիսանում է նրա ստեղծագործական առաջընթացի, արագ զարգացման հիմնական նախադրյալը։ Սակայն նրան այդ շրջանում պակասում էր նորի, սովետական կյանքի ճանաչողությունը, սոցիալիստական ռևոլյուցիայի խնդիրների խոր գիտական ըմբռնումը և գրական վարպետություն։ Հենց սրանով էլ պայմանավորված է նրա (և ոչ միայն նրա) այդ շրջանի ստեղծագործությունների զգալի մասի գրական ու գաղափարական ցածր որակը, արտահայտված վերացական ռոմանտիզմով և գրական սխեմատիզմի տարրերով։

Զարյանի մասին գրված քննադատական գրականության մեջ նրա ստեղծագործությունների թեմատիկայի այժմեականությունը, որոշ քննադատների կողմից, ընդունվել է խոր գաղափարականության տեղ և արդարացվել գեղարվեստական անկատարելությունները, թերությունները։ Ինչ խոսք, թեմայի ընտրությունը սերտ կերպով կապված է հեղինակի մտածողության, գաղափարների, նրա ձգտումների ու ցանկությունների հետ։ Բայց դրանով չի ավարտվում հարցը։ Թեման (առավել ևս սովետական կյանքից վերցրած նյութը) գրողից պահանջում է խոշոր և բազմակողմանի դիտելիքներ և գրական վարպետություն, պահանջում է մարքս-լենինյան աշխարհայացք։ Թեմայի, նյութի ոչ լրիվ գեղարվեստական պատկերումը հաճախ հանգեցնում է ակտուալ թեմայի արժեքազրկման։

Ն. Զարյանի առաջին ստեղծագործությունները մեծամասնությամբ նվիրված են այժմեական թեմաներին, բայց դրանց մեջ զգալի տեղ են գրավում այնպիսի գրվածքները, որոնք տառապում են գրական, գեղարվեստական անկատարելությամբ և գաղափարական տեսակետից ունեն թերություններ։ Մեր խոսքը վերաբերում է ոչ միայն նշված ժողովածուին, այլև քաղաքացիական կոիվները պատկերող նրա առանձին պոեմներին։

Պատկերացնելով հնի ու նորի հակադրությունն ու պայքարը, Զարյանն իրեն համար աննկատելիորեն, ստեղծել է մեքենայի կուլտ, էլեկտրականության ու «մաշինաների» պաշտամունք և անտեսել է հին գործիքների ու քաշող ուժերը՝ նորի կառուցման գործում։

Էլ ինչ էշ,
Էլ ինչ եզ,
Գոմեշ,

Ինչ անենք սելը կարկամած,—
Հասել են թռչելու ժամեր։
(«Աերոողջույն»)

Կամ՝

Տխուր է զնդում գերանդին,
Հասկերը շրշում են՝ «ուշ է...»—
Ինչքան էլ եռաս եռանդից,
Գերանդին արդեն անույժ է։
Երբ էնտեղ հնձվոր մաշինան
Շափշափում է շախին եռանդից,
Շպրտում է խուրձերը շինած,—
Էլ ուր է զնդում գերանդին։
Է՞յ, քոնն է հունձը, մաշինա,—
Տխուր է զնգում գերանդին։

Ժխտման այս պաֆոսը և մեքենայի կուլտը չէր բխում նորի, սովետական սկզբունքների խոր ըմբռնումից։ Դա ավելի ճիշտ նորի մասին ունեցած մակերեսային պատկերացում էր, հեռու ռևոլյուցիոն, կյանքը հաստատող և ապագան կանխատեսող ռոմանտիզմից։ Ճիշտ է, սովետական կարգերն իրենց հետ բերեցին ոչ միայն նոր սկզբունքներ ու գաղափարներ, նոր կենցաղ ու նոր բարոյականություն, այլև կյանքը նոր ձևով վերակառուցելու համար տեխնիկական բազա։ Այդ տեխնիկան իր բոլոր արտահայտություններով ինքնանպատակ չէր սովետական մարդկանց համար, այլ միջոց նրանց ձեռքում՝ նոր կյանք կառուցելու, նորի դիրքերն ամրացնելու։ Նա, ով տեսնում էր միայն տեխնիկան և չէր տեսնում նրան շարժման մեջ դնող սովետական մարդուն — նա, հանուն այդ նոր, կատարյալ տեխնիկայի պատրաստ էր անմիջապես ժխտելու արտադրության հին միջոցները, կամ գյուղատնտեսության հին գործիքները, նա խորապես սխալվում էր։

Տարիներ հետո, երբ Ն. Զարյանն աշխատում էր «Ռուշանի քարափ» պոեմի վրա, նա ավելի ճիշտ էր պատկերացնում հին և նոր արտադրական միջոցների փոխհարաբերության հարցը և լավ էր ըմբռնել սովետական նախաձեռնող մարդու դերը՝ սոցիալիզմի կառուցման գործում։

Տրակտորը կամք է բերում, տրակտորն ուժն է հսկա,
Բայց որպեսզի նա լինի, որ գա նա գալ տարի,
Հարկավոր է մեզ լարում, հարկավոր է մեզ կամք
Ու միացյալ աշխատանք չթի ու եզների,—

ասում է պոեմի հերոսներից մեկը։

Հարցի այս ճիշտ և խոր ըմբռնումն այն ժամանակ բացակայում էր Ս. Զարյանի մոտ, էլ չենք խոսում շատ ուրիշ սովետական գրողների մասին։ Նրանց համար տեխնիկայի ռոմանտիկական փառաբանությունն ի վնաս մարդու, և հին տեխնիկական միջոցների նիհիլիստական ժխտումը, պատկերանում էր որպես ճշմարիտ ռևոլյուցիոն վարքագիծ։

Մակերեսային, աղոտ և հաճախ սխալ պատկերացումները նոր կյանքի, նրա նպատակների ու զարգացման հեռանկարների մասին, իրենց բացասական

ազդեցությունն էր թողնում գրական երկերի վրա, մտցնելով նրանց մեջ սխեմատիզմ ու սառնություն, պատկերների անորոշություն ու ոճի խառնուրդ։

Այս տեսակետից բնորոշ են և Ն. Զարյանի առաջին շրջանի ստեղծագործություններից մի քանիսը։

«Ջրանցքի» բանաստեղծությունների մի զգալի մասը այդ է վկայում։ Բացի նշված թերությունից, այստեղ որոշակիորեն արտահայտված է բանաստեղծական լեքսիկոնի խառնուրդ, որը հատուկ էր միայն անցողիկ շրջանին։

Տեխնիկա արտահայտող բառերը (մաշինա, սավառնակ, աերո, էլեկտրականություն, տրակտոր) միախառնվել են ժողովրդական բարբառի հետ՝ գիփ, հերու, չուխա և ստեղծել լեզվական յուրահատուկ աններդաշնակություն։

Գործարանը համարվում է «գոմեշ մրտդեմ», իսկ շոգեքարշը՝ «երկարականջ վիթխարի էշ»։

Ավելին. նա գյուղական պատկերները նորոգում է, այսպես ասած՝ «մեքենայացնում»։ Սավառնակը անվանում է «թռչնասել» կամ «աերոսել» և այլն։

Այս ոճական խառնուրդն ու էկլեկտիզմը, լինելով անցման շրջանին հատուկ երևույթ, Զարյանի մոտ յուրահատուկ ձևով է արտահայտվել։ Եթե Ե. Չարենցի, Աբովի, Վշտունու մոտ քաղաքի լեքսիկոնն էր գերակշռում և նոր երևույթները բեկվում էին քաղաքային կյանքի պրիզմայով, ապա Ն. Զարյանի մոտ նոր կյանքի նոր երևույթները բեկվում էին գերազանցապես գյուղական մտապատկերների միջոցով։ Եվ դա հասկանալի է։ Զարյանը գրականության մեջ մուտք գործեց գյուղից և գյուղական կյանքն իր բնորոշ կողմերով ամուր էր նստած նրա հոգու խորքում։ Նա իր զգացմունքով ու հոգեբանությամբ, մտապատկերներով կապված էր գյուղական միջավայրի հետ և դրա համար երիտասարդ բանաստեղծին սավառնակը պատկերանում էր որպես «թռչող սել»։

Ճիշտ է, Նաիրի Զարյանը գիտակցորեն մերժում էր հին գյուղը, «հրաժեշտ» էր տալիս իր հայրենի հնամենի Խառակոնիսին, որտեղ անց էր կացրել իր մանկության տարիները (ի դեպ ասած, դա ժողովածուի ամենահաջող բանաստեղծությունն է «Աերո կարոտի» հետ միասին), բայց երիտասարդ հեղինակը հոգեբանության ներքին թելերով կապված էր գյուղական կյանքի հետ և այդ մտապատկերներն այնքան թարմ էին, ուժեղ, որ արտահայտված են նրա ստեղծագործության մեջ։ Դա նույնպես խոսում է այն մասին, որ նոր գաղափարները դեռ չէին դարձել հոգեբանություն, «միս ու արյուն»։ Զարյանի կեցությունը փոխվել էր, բայց հոգեբանության, մտածողության մեջ դեռ կար հնի մնացուկներ։ Եվ դա հասկանալի է։ Մարքսիզմը սովորեցնում է, որ մարդկանց մոտ մտածողությունը հետ է մնում նրանց կեցությունից։ Նույն երևույթը նկատելի էր և Զարյանի առաջին շրջանի ստեղծագործությունների մեջ։

Այս ընդհանուր դիտողություններից հետո մենք կարող ենք անցնել նրա առաջին շրջանի պոեմների վերլուծմանը։

2

Ն. Զարյանի առաջին շրջանի (մինչև 1930 թ.) ստեղծագործության համար բնորոշն ու կարևորը մնում են պոեմները։ Նա այդ տարիների ընթացքում գրել է մեծ թվով պոեմներ՝ «Հրանուշը», «Նոյեմբերյան օրերին», «Տրիբունը», «Տաթևի ժայռից», «Ապստամբությունն», որոնք արժանի են ուշադրության։ Նրանք ընդգրկում են սովետական կյանքի ու իրականության շատ կողմեր (ռևոլյու-

ցիոն անցյալ, քաղաքացիական կռիվներ, սոցիալիստական շինարարություն), վկայում են հեղինակի ստեղծագործական զարգացման մասին։ Ինչպիսի թերություններ էլ որ ունենան այդ շրջանի պոեմները,— մենք դրանց մասին գեռ կխոսենք,— այնուամենայնիվ, մնում է փաստ այն ճշմարտությունը, որ նրանք իրենց ընգգրկած հարցերով և գրական արժանիքներով, առանձնահատուկ տեղ են գրավում սովետահայ գրականության պատմության մեջ։

Զարյանին ժամանակակից և ոչ մի գրող, բացառությամբ Հ. Հակոբյանի, Ե. Չարենցի, ո՛չ հիշյալ և ո՛չ էլ նրանից հետո՝ 30-ական թվականներին, այդ հարցերը չի դարձրել ստեղծագործության առանցք, ինչպես նա է այդ արել։

Ն. Զարյանին ժամանակակից սովետական մյուս բանաստեղծներից ոմանք առանձին դեպքերում շոշափել են այդ թեմաներն իրենց երկերում, բայց նրանց մոտ այդ բոլորը էպիզոդիկ բնույթ են կրել։ Նրանք նվիրել են այդ հարցերին առանձին բանաստեղծություններ, իսկ բացառիկ դեպքերում նաև պոեմներ։ Մինչդեռ Զարյանի մոտ դա եղել է ստեղծագործական կոնցեպցիա և հետո շարունակվել ու զարգացել է, ընդունելով նոր ձևեր ու գույներ։ Հայաստանի քաղաքացիական կռիվները, ինչպես նաև սոցիալիստական շինարարությունը, բացի Հակոբյանից և Չարենցից, այնպիսի կենտրոնական տեղ չի գրավում որևէ այլ սովետահայ բանաստեղծի երկերում, ինչպես այդ նկատելի է «Ռուշանի քարափի» հեղինակի մոտ։ Եվ երբ մենք մտքի մի թռիչքով հիշում ու մտաբերում ենք այդ շրջանի սովետահայ պոեզիան իր հիմնական արտահայտություններով, մեր հեղինակի պոեմներն ու բանաստեղծությունները փայլում են այդ ֆոնի վրա, որպես կարևոր ներդրումներ սովետահայ գրականության մեջ։

Պատմականության այդ սկզբունքը կարևոր է հասկանալու համար տվյալ հեղինակի մատուցած ծառայությունները՝ գրականությանը։ Վերացական մոտեցումը, հեղինակին իր պատմական-գրական միջավայրից կտրված գիտելը՝ արատավոր է իր հիմքում և չի կարող ճիշտ պատկերացում տալ գրողի մասին։ Այդպիսի մոտեցում հատկապես անհրաժեշտ է Զարյանի ստեղծագործությունների վերլուծության համար։

Երբ մենք քննում ենք այդ ստեղծագործությունները՝ կապակցված պատմական միջավայրի և գրական շրջապատի հետ, Զարյանի գերը ակներևորեն մեծանում է։ Նա մեծանում է ոչ միայն նրա համար, որ հիշյալ հեղինակն ունկնդրել է ժամանակի ձայնին և արձագանքել մեր ժողովրդին, սովետական հասարակայնությանը հուզող հարցերին, այլև նրա համար, որ իր օգտագործած գրական ժանրերով հարստացրել է սովետահայ պոեզիան։

Սկսած 1925 թվականից նա համառորեն աշխատում է մշակել սյուժետային պոեմի ժանրը և, պետք է ասել, այդ ասպարեզում նա քիչ հաջողությունների չի հասել։ Այս հարցումն էլ փորձենք համեմատել նրան մեր շատ սովետահայ պոետների հետ։ Առավելությունը դարձյալ մնում է Զարյանի կողմը։ Այո, ոչ ոք այնքան չի աշխատել և չի աշխատում սովետական պոեզիայի համար բացառիկ կարևոր նշանակություն ունեցող սյուժետային պոեմի մշակման համար, ինչպես Զարյանը։ Նա այս ասպարեզում, կարելի է ասել, շարունակում է Թումանյանի գրական տրադիցիաները, թեև սկզբունքներն ու որակները տարբեր են։

Ի՞նչ են ներկայացնում այդ պոեմներն իրենցից, որո՞նք են նրանց դրականը, առավելությունները, և որոնք՝ թերությունները, և ի՞նչպես պետք է գնահատել դրանց ընդհանուր նշանակությունը։

Այդ պոեմներում հեղինակն զգալի շրջադարձ է կատարում դեպի նոր մարդկանց պատկերումը, հրաժարվելով «Ջրանցքի» վերացական ռոմանտիզմից ու տեխնիցիզմի տարրերից։ Պոեմների դրվելու տարիներին սովետական դրականությանը հուզում էր նոր, սովետական մարդու, ռևոլյուցիոների-բոլշևիկի կերպարի կերտման հարցը։ Այդ հարցը այսօր էլ շարունակում է հուզել մեր գրական կազրերին։

Զարյանն իր պոեմներով փորձում է պատկերել նոր մարդու, ռևոլյուցիոների կերպարը և սոցիալիզմ կառուցող մարդու բարոյական հատկություններն ու բնորոշ գծերը։ Այս առումով նրա պոեմները, թեև նվիրված են տարբեր հարցերի և տարբեր ժամանակներ են ընդգրկում, բայց ներքնապես կապված են իրար հետ։

Նրա առաջին պոեմի հերոսուհին՝ Հրանուշը, որի անունով էլ կոչվում է պոեմը, էնտուզիաստ ռևոլյուցիոներուհի է։ Նա տարված է աշխատանքով։ Շատերն են զգում նրա կարիքը, նա ամեն տեղ հասնում է, լույսով թե գիշերով օգնում մարդկանց՝ աշխատանքում, բացատրում, կազմակերպում, վայելելով մասսաների սերը, հարգանքը։

Այդ նա էր —
Ենթաշեֆ գյուղ։
Կինբաժին,
Գարաժ։
Բանակումբ։
Լույսով, գիշերով աներկյուղ,
Պարապմունք Կարմիր Բանակում։

Նա ռևոլյուցիայի գործին նվիրված բոլշևիկուհի է, հաստատուն ու անձնվեր, համարձակ ու գործունյա։ Ճիշտ է, այդ հատկությունները նկարագրելու համար երիտասարդ հեղինակին պակասում էին գրական-արտահայտչական միջոցներ — բանաստեղծական գույները աղոտ են, պատկերները ոչ ցայտուն։ Բայց զգացվում է հեղինակի սերը հերոսուհու նկատմամբ։ Նա աշխատել է ջերմացնել նրա կերպարը, նկարագրելով նրա ռևոլյուցիոն անցյալը (ձերբակալությունը դաշնակների կողմից), թորախտով տառապելը և մահը։ Չնայած այդ բոլորին, Հրանուշի կերպարը, այնուամենայնիվ, լիարյուն չէ, նա կրում է իր վրա սխեմատիզմի դրոշմը։ Ավելին։ Հեղինակը նրան վերագրել է ասպետուհու գծեր, որն արտահայտված է իր անձնականը զոհելու գաղափարի մեջ, մարդկային հակումներից հրաժարվելու մեջ՝ հանուն ընդհանուր, հասարակական գործի։ Իսկ դա բնավ չի բխում այդ կերպարի ընդհանուր բնույթից ու սկզբունքից։ Հրանուշը գիտակցորեն հրաժարվում է սիրելուց, թեև նրա «շրթերին դողում է վաղուց մի անուն»։

Երբեմն՝ սիրով վարարած՝
Ցանկացել է կապանքը բանալ,
Բայց միշտ էլ պահել է նրան
Մի ներքին, ամուր զսպանակ։

Հեղինակն արդարացնում է իր հերոսուհու նման վարմունքը։ Որքան էլ այդ կերպարը նկարագրված լինի ռոմանտիկական պլանով, այնուամենայնիվ,

անձնականի ու հասարակականի այդ հակադրությունը, անձնականի զոհաբերումը հասարակականին, նրա կերպարի մեջ մտցնում է ֆայլշ, սխեմատիզմ և ցույց է տալիս, որ հեղինակն այն ժամանակ դեռևս խոր կերպով չէր պատկերացնում այդ հարցը, սովետական լիարյուն մարդու կերպարի հարցը։ Ճիշտ է, ռևոլյուցիոն շարժման մեջ, ինչպես և սովետացման առաջին տարիներին, եղել են անհատներ, որոնք մեծ գործին ծառայելը այլ կերպ չեն պատկերացրել, քան անձնական կյանքից ու բնական զգացումներից հրաժարվելը, այն ընդհանուրին, հասարակականին զոհաբերելը, բայց այդ ասկետիզմը կապ չունի մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների հետ, պրոլետարական ռևոլյուցիոնների իսկական կերպարի հետ։ Ցավոք սրտի այդ ֆայլշը, վրիպումը Հրանուշի կերպարի մեջ պատահական չէ հեղինակի ստեղծագործության համար։ Այդ սխալը, կոհողության այդ բարեպաշտությունը նա ուրիշ դեպքումն էլ է ներկայացրել որպես կոմունիստական մորալի արտահայտություն, որպես նոր, սովետական մարդու բարոյական հատկություն։ Այս տեսակետից բնորոշ են վարպետ Սամսոնի և նրա կոմերիտական որդու կերպարները «Կառուցողները» պոեմում (1927)։ Այդ պոեմում զգացվում է, որ բանաստեղծական տողը համեմատաբար հնչեղ է, լեզուն պարզ, զերծ խառնուրդից։ Հեղինակը ձգտել է հաղորդել քաղաքի շինարարական պաֆոսը, նոր շենքերի կառուցման եռուզեռը և կառուցող վարպետի խանդավառությունը, որը

«Կիսատ շենքերի ցրիվ երամում տեսնում էր լրիվ
քաղաքն ավարտված»։
Շարում էր, շարում, տարված ու գինով,
Ելած շինության բարձր կատարին,
Շարում էր, շարում, շենքեր էր շինում,
Հիմքեր էր դնում մի նոր աշխարհի։
Երբ սարից այն կողմ արևն էր հանգչում,
Գալիս էր նստում տանը ընթրիքի։
Լսում էր որդու երգը կարկաչուն,
Երգը՝ նվիրված վաղվան, գալիքին։

Թվում է, թե այդպիսի մի առաջավոր բանվոր-կառուցող կարող էր մտածել նավ բնակարանում ապրելու մասին և դա ոչնչով չէր նսեմացնի նրա կերպարը։ Մինչդեռ հեղինակն այլ կերպ է մտածում և այլ կերպ է նկարագրել նրան։ Վարպետն ապրում է «խարխուլ խրճիթում», «հավաքնում» և չի ցանկանում այնտեղից դուրս գալ, նոր բնակարան ստանալ, որովհետև իր նման շատերը կան։ Այսպես է հավատացնում հեղինակը և այդ հողի վրա ընդհարում է տեղի ունենում կնոջ ու ամուսնու միջև։ Որդին պաշտպանում է հորը, ասելով.

«Ինչներիս է պետք տունը սեփական,
Մի վիրավորիր սիրտը հայրիկի»։

Բայց պատահում է, որ հեղինակի կամքով վարպետ Սամսոնը շենքի բարձունքից վայր է ընկնում ու մահանում։

Այդ խոր սգի մեջ կինը, հեղինակի մոգական գավազանի օգնությամբ, մեկից հեղաշրջվում է, ասելով.

Քանի կան մարդիկ անտուն, անկտուր,
Չեմ պահանջի ես նոր բնակարան։

Անձնազոհության այսպիսի փիլիսոփայությունը, զոհողության այդ ըմբռնումը, ավելորդ է ասել, որ ոչ մի բանով չի առնչվում կոմունիստական մորալի հետ։ Դա վայել է նախնադարյան ասկետներին և ոչ սովետական մարդկանց, որոնք նոր կյանք են կառուցում և ձգտում են լիովին բավարարել իրենց բոլոր անձնական պահանջներն ու հակումները։

Նոր մարդու այս սխալ ըմբռնումը, գաղափարական այդ անճշտությունը սխեմատիզմի ուժեղ տարր է մտցրել պոեմի կերպարների մեջ, արհեստական գիծ հաղորդելով սյուժեին (կնոջ հանկարծակի վերափոխությունը)։ Այս բոլորով հեղինակը մեղանչել է կյանքի ճշմարտության դեմ, սոցիալիստական ռեալիզմի և ռևոլյուցիոն ռոմանտիզմի սկզբունքների դեմ։

Այսպիսով, գաղափարականության պակասը պատճառ է դարձել գեղարվեստական տեսակետից թույլ կերպարներ ստեղծելու։ Քանի դեռ երիտասարդ բանաստեղծի համար պրոլետարական աշխարհայացքը «միս ու արյուն» չէր դարձել, քանի դեռ նա անհրաժեշտ խորությամբ չէր յուրացրել մարքսիզմ-լենինիզմի մեծ գաղափարները, իր գրվածքներում թույլ էր տալիս կյանքի, երևույթների մակերեսային և անհավանական, երբեմն նույնիսկ սխալ մեկնաբանություն և դրանով իսկ իր գրվածքների մեջ մտցնում շորություն, սխեմատիզմ, կերպարների անորոշություն։ Բայց այդ թերությունները չեն նսեմացնում նրա այդ շրջանի գրվածքների, հատկապես քաղաքացիական կռվին նվիրված պոեմների նշանակությունը։

«Դուք կգաք նորից», «Տրիբունը», «Տաթևի ժայռից», «Ապստամբությունը» գրվածքներում հեղինակը նկարագրում է բոլշևիկ ռևոլյուցիոների անվեհերությունը, արիությունն ու քաջությունը և դաշնակցականների վայրենի բարբարոսություններն ու գազանությունները։ Առաջին գրվածքը հեղինակը նվիրել է 1920 թ. Հայաստանում բարձրացած մայիսյան ապստամբության երեք հերոսներին՝ Մուսայելյանին, Ալավերդյանին և Ղարիբջանյանին և նկարագրել է նրանց հերոսական մահը.

Մաուզերիստներ, սպանում եք մեզ,
Բայց կգանք, կգանք մենք նորից։

Սա է հենց վերջին խոսքը, որը հաստատում է նրանց հավատարմությունը կոմունիզմի մեծ գործին։

Հեղինակն այդ փոքրիկ գրվածքում, որը սովորական իմաստով չի կարելի պոեմ անվանել, կրքոտ տողեր է նվիրում այդ նահատակված հերոսներին և ժողովրդական պոեզիայից վերցված հնարանքներով, աշխատում է ընդգծել եղեռնի ահավորությունը և էմոցիոնալ շեշտ հաղորդել իր գրվածքին, որն զգալիորեն հաջողվում է նրան.

Այդ ոճրի վրա կես գիշերային
Ծառերը միայն սգացին,
Ծաղիկները արնոտ արտասվում էին,
Առուն լուռ կանգնել էր լացի։

Բայց հերոսների ներքին աշխարհը, նրանց հոգեբանությունը մնում է չբացահայտված։

Նույնպիսի մոտեցում է հանգես բերել և «Տրիբուն» պոեմի հերոսի նկատմամբ։ Դա նույնպես մի էպիզոդ է մայիսյան ապստամբությունից։ Բոլշևիկ հերոսը՝ Ստեփանը, գտնվում է դաշնակների բանտում, նրան մահ է սպառնում, եթե ներողություն չխնդրի, չհրաժարվի իր գաղափարներից և չհայտնի, որ ինքը գործակալ է, «կաշառված է կարմիր ոսկիներով»։ Նույնիսկ մայրն է միջամտում, որ տղային համոզի, բայց նա մնում է հավատարիմ ռևոլյուցիայի գաղափարին՝ հերոսաբար մահ է ընդունում։ Պոեմը կառուցված է կենդանի դիալոգի վրա, որ տեղի է ունենում տղայի և մոր միջև և որդու արտասանած պատասխան ռեպլիկաներից միայն ընթերցողը պատկերացում է կազմում նրա արիության, հաստատակամության մասին։ Իսկ նրա սիրած աղջկա՝ Անահիտի անվան հիշատակումը՝ նրան մղում է քաղցր հիշողությունների գիրկը և նա մի պահ հիշում է իր անցյալը։

Իսկ այդ բոլորը բավական չեն, որ ընթերցողը պատկերացում կազմի Ստեփանի, նրա գործունեության և նրա ապրումների մասին։

«Տաթևի ժայռից» պոեմը (1927) հեղինակը նվիրել է Հայաստանի քաղաքացիական կռիվների արյունալի մի էջի նկարագրությանը։ Դաշնակ բանդիտներն արյունոտ դատաստան են տեսնում բոլշևիկացող աշխատավորության հետ և մասսայաբար կոտորում են՝ Տաթևի ժայռից նրանց կենդանի վայր նետելով։ Հեղինակն առանձին շտրիխներով ցույց է տալիս բոլշևիկների կերպարները և ծաղրում է դաշնակ մաուզերիստների ներկայացուցիչներին, որոնց բռնության ու թալանի իշխանության դեմ, ինչպես ասում է բոլշևիկ Կարոն՝

Գյուղերը բոլոր մեր կողմն են անցել,
Մեր ընկերները այստեղ կգան գեռ...
Այստեղ կգան դեռ,— այս ժայռի վրա
Կլինի կարմիր վրեժ ու պատիժ։

Բանաստեղծը քաղաքական սրատեսությամբ մերկացրել է դաշնակ ոճրագործների այլանդակ դեմքը և ցույց է տվել նահատակների վառ հավատը գալիք հաղթանակի նկատմամբ։

«Ապստամբություն» (1928) պոեմի մեջ հեղինակն արդեն ստեղծագործական զգալի հաջողությունների է հասնում, ոչ միայն լեզուն է մաքրվում խառնուրդից, այլև Զարյանը ռեալիստական գույներով է նկարագրում դաշնակ մաուզերիստների բաշիբոզուկությունը գյուղում և գյուղացիության զայրույթի տարերային պոռթկումը, որն ընդունում է ապստամբության ձև։

Սյուժեի տեսակետից պոեմը հաջողված է, դեպքերի զարգացումը տրամաբանական են։ Հեղինակն այստեղ ստեղծում է որոշ բնավորություններ՝ հանձին բոլշևիկուհի Սաթոյի, ինչպես և մաուզերիստներ Դալիի և Տոնոյի։ Պոեմի հիմնական խոցելի տեղը թերևս այն է, որ ցույց չի տրվում ապստամբության նախապատրաստությունը, նա առաջ է գալիս տարերայնորեն, իսկ այն ապստամբությունը, որը նախապատրաստված է բոլշևիկների կողմից՝ դեպոյի բանվորների մասնակցությամբ, պոեմում չի նկարագրված։

Ռևոլյուցիոն անցյալին և քաղաքացիական կռիվներին նվիրված պոեմների մեջ յուրահատուկ տեղ է գրավում «Նոյեմբերյան օրերը» (1926)։ Սա ամենածավալունն է դրանց մեջ և շատ պատասխանատու թեմա է շոշափում՝

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը, դաշնակցականների փեարրվարյան ավանտյուրան, քաղաքացիական կռիվները և դաշնակների վերջնական ջախջախումն ու սովետական կարգերի ամրացումը։

Այս կարևոր և պատասխանատու թեմայի մշակման ժամանակ երիտասարդ բանաստեղծը հանդես է բերել պատմական մեծ դեպքեր նկարագրելու ընդունակություն, կարողացել է ստեղծել լարվածություն, հաղորդել է իր գրվածքին թափ։ Բայց, չնայած իր առավելություններին, պոեմը հիմնականում պետք է համարել ձախողված գործ։ Ձախողված և՛ գաղափարական, և՛ գրական տեսակետից։ Հեղինակը չի կարողացել բացահայտել կատարվող դեպքերի քաղաքական-գաղափարական իմաստը, լայն կերպով նկարագրել աշխատավորության ծանր դրությունը, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի բարերար ազդեցությունը և դրանով ցույց տալ Հայաստանի համար սովետական կարգերի հաստատման անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը։ Բանաստեղծը սահել է երևույթների մակերեսով և չի բացահայտել նրանց ներքին քաղաքական իմաստը։ Փոխանակ կենդանի, ազդեցիկ պատկերներով նկարագրելու սովետական իշխանության գործունեությունը՝ դաշնակցական Հայաստանի փլատակների վրա, բացահայտելու մաուզերիստների ավանտյուրան, ներքին ու արտաքին կոնտրռևոլյուցիոն ուժերի միացյալ գործունեությունը, սովետական կարգերի հաստատման նախադրյալները — ռևոլյուցիոն Ռուսաստանի ու Կարմիր Բանակի օգնությունը և այլն, այս բոլորի փոխարեն հեղինակը բավարարվում է դեպքերի ու մարդկանց անունները հիշատակելով, առանց ցույց տալու նրանց ներքին տրամաբանական կապը։ Այնքան սրընթաց են իրար հաջորդում դեպքերը, որ ընթերցողի միտքը չի հասնում նրանց հետևից, և պարզ է, որ նման դեպքում ամբողջական տպավորություն չի կարող ստացվել։

Հեղինակի համակրանքն ու հակակրանքը, սերն ու ատելությունը հաստատված են ճիշտ։ Այդ ակնբախ է, բայց մոտեցումը նյութին, դեպքերի նկարագրությունն անբավարար է։ Հեղինակը թշնամիներին ներկայացնելու համար հաճախ դիմում է երգիծանքի, ծաղրի օգնությանը։ Բայց որովհետև դրական այդ բարդ արվեստին նա այն ժամանակ դեռ չէր տիրապետում կատարելությամբ, իսկ ֆորմալիզմն իր հերթին խանգարում էր, նրա երգիծանքը չի հասնում իր նշանակետին։ Հարվածը կամ վրիպում է, կամ չանկոտում ու անցնում, առանց մահացու վերք հասցնելու թշնամուն։

Ահա մի պատկեր նման «երգիծանքից».

— «Հաշվառնել շտապ քաղաքի
Ավելորդ հացը թաքցրած»։
Պատերին —
Հրամանը հակիրճ,
Մայթերին՝
— Սոված եմ...
— Հաց...
— Ներս, ներս...
Ներս մտեք տները...
Երկիրը սովից կսպանեն
Բոլշևիկները։
Փողոցում ձմեռ։

Կրասնարմեեց,
Խորհրդային իշխանություն։
Դեմը սով,
Մարդիկ մահամերձ։
— Գնանք տուն...

Այսպիսի պատկերները, կամ՝ «պարոն Գարեգիններին», «Սարո Սարսափունիներին», «Ջոչաղաներին» մակերեսային ծաղրելը կամ, ավելի ճիշտ, շարժի ենթարկելը չի հասնում իր նպատակին, չի օգնում հասկանալու դեպքերի քաղաքական իմաստը և ներքին տրամաբանությունը։

Կարելի է այս պոեմի մասին շատ խոսել և ցույց տալ նրա շատ թերություններ։ Մենք կարծում ենք դա ավելորդ է։ Մեր ասածը բավական է նրա մասին համապատասխան եզրակացություն անելու։ Հեղինակը հանդես է բերել համարձակություն՝ ձեռնարկելով պատմական մեծ ու պատասխանատու դեպքի նկարագրությանը, նա այդ պոեմում ցուցադրել է գրական ընդունակություններ՝ մեծ կտավի գործեր ստեղծելու ասպարեզում։ Բայց նրա «Նոյեմբերյան օրերը» որպես ամբողջություն, որպես Հայաստանում սովետական կարգեր հաստատելու համար մղվող պայքարի գեղարվեստական վերարտադրություն անհաջող գործ է։ Պոեմում կան հիշատակություն պատմական անցքերի մասին, ասված ռեպլիկայի կարգով, բայց չկա բուն դեպքերի խոր, բազմակողմանի նկարագրությունը՝ քաղաքական սուր ու ճշմարիտ բովանդակությամբ։ Այս տեսակետից էլ խորապես սխալվում են այն ընկերները, որոնք գրական տեսակետից թերություններ տեսնելով պոեմում, գովաբանում են նրա քաղաքական ու գաղափարական բովանդակությունը։

«Պոեմում հաջող է տրված դեպքերի պատմական ընթացքը և պայքարող ուժերի գեղարվեստական կոնտրաստը»,— գրում է Սահակ Բազյանը։ Կամ՝ «Նոյեմբերյան օրերի» մեջ ավելի ամբողջացել է «Զարյանի պոեզիայի սոցիալիստական պաթոսը»[1]։ Կամ՝ «Զարյանը հաջողությամբ ստեղծել է էպիզոդիկ սյուժեներ, հավանական էֆեկտներ, որոնցով ամբողջացրել է երկի գեղարվեստական և իդեական բովանդակությունը» - և այլն։ Այս գնահատականները ցույց են տալիս, որ հարգելի քննադատը, թեման շփոթելով գաղափարների հետ, դեպքերի խրոնիկան՝ պատմական ճշմարտության հետ, իսկ ֆորմալիզմի քայքայիչ ազդեցությունը (հավանական էֆեկտները)՝ գրական վարպետության հետ, այդպես բարձր է գնահատել պոեմը, այնուհետև գրական ու գաղափարական մեծ արժանիքներ տեսել նրանում։ Ճիշտ է, Ս. Բազյանի հոդվածում կարելի է հանդիպել և իրար հակասող տեսակետների, բայց հիմնական գնահատականը պետք է համարել վերևում հիշվածը։ Այդ կարծիքը, պոեմի մասին, կարելի է ասել, եղել է տիրապետող մինչև վերջերս, մինչդեռ դրանից պետք է հրաժարվել։

Զարյանի մյուս պոեմներում («Հնոցի մոտ», «Պատմում է կարմիր դիրեկտորը», «Բաքուն» և այլն) նկարագրված են սոցիալիստական շինարարության հաջողությունները և այդ բոլորը հակադրված են մռայլ ու դաժան անցյալին, հատկապես դաշնակցական Հայաստանին, ցույց տալով ռևոլյուցիոն բռնկումները՝ ճնշման, կեղեքման ու հարստահարման ռեժիմի դեմ։

---

[1] Ս. Բազյան։ Երեք ուրվագիծ, էջ 8։
[2] Նույն տեղում, էջ 6—12։

Հեղինակը հնի ու նորի այդ հակադրությամբ հաստատում է նորը, սովետականը և ատելություն է տածում դեպի դաժան ու մութ անցյալը և իր մանկությունը։

Թեմատիկան ընդարձակվում է, ընդգրկված հարցերի շրջանները լայնանում։ Հետագայում նա անցնում է արդեն սովետական իրականության նկարագրությանը, ցույց տալով այն ներքին դասակարգային պայքարը, որը մղվում է սոցիալիզմի կառուցման տարբեր ճակատներում։ Քաղաքի վերակառուցման («Կառուցողներ»), արդյունաբերական օջախների ստեղծման («Պատմում է կարմիր դիրեկտորը») հետ միասին եռանդուն պայքար է տարվում գյուղի սոցիալիստական վերակառուցման համար։ Սոցիալիստական քաղաքը Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, օգնության է հասնում գյուղի աշխատավորությանը և գյուղում «ծնվում է նոր կյանքը», կոլտնտեսային, սոցիալիստական կյանքը։ Այս մասին է պատմում հեղինակն իր «Կապը» և «Ծնվում է նոր կյանք» պոեմներում։

Եթե առաջինը («Կապը») մի էպիզոդ է, ոչ այնքան հաջողված, ապա երկրորդը պոեմ է, ծավալուն մի գործ։ Այստեղ հեղինակը նկարագրում է գյուղում սրվող դասակարգային պայքարը և ցույց է տալիս կոլտնտեսականների գործունեությունը կուլակային տարրերի դեմ։

Այդ պոեմի մեջ տրված են «Ռուշանի քարափի» հիմնական հարցերը՝ սաղմնային ձևով։ Դա կարելի է համարել «Ռուշանի քարափը» նախապատրաստող մի կարևոր երկ։

Նույն այդ շրջանում նա գրել է «Չին աղջիկը» մանկական պոեմը, նվիրված չին ժողովրդի ազգային-ազատագրական կռվին։ Սատիրական ծաղրի է ենթարկել սովետական կարգերին հարմարվողի տիպը, հանձին Վարդան Վարագյանի (որի մասին մենք կխոսենք առանձին) և գրել է ինքնակենսագրական պոեմներ («Բաքու», «Բաքու, մերոնց մոտ»)։ Վերջինի մեջ նա հաջող կերպով մոայլ անցյալին հակադրել է սովետական ներկան։ Հեղինակն այնտեղ ատելությամբ է խոսում իր մանկության մասին, և պոլեմիկա է մղում իրենց մանկությունը և ընդհանրապես անցյալն իդեալականացնող նացիոնալիստ գրողների դեմ։

Այդ տարիներին, բացի պոեմներից, Զարյանը գրել է նաև բանաստեղծություններ։ Դրանք թվով քիչ են և մեծ տեղ չեն գրավում հեղինակի այդ շրջանի ստեղծագործությունների մեջ, բայց և այնպես արժանի են ուշադրության։ Դրանք իրենց թեմատիկայով և առաջադրած հարցերով նորություն չեն պարունակում, որ շոշափված չլինեին նրա պոեմներում։ Բայց այդ հանգամանքը չի նսեմացնում նրանց ինքնուրույն նշանակությունը։ Բանաստեղծությունների մեջ գերակշռում է սոցիալիզմի կառուցման էնտուզիազմի պատկերումը, ինչպես նաև երկրի պաշտպանության հարցերը։

«Կարմիր Բանակի քայլերգ», «Պատերազմ և խաղաղություն», «Քսանվեց էնտուզիաստներ» և այլն բանաստեղծությունները նվիրված են այդ հարցերին։

Հեղինակը փորձել է իր ուժերը նաև բանաստեղծական այնպիսի ժանրում, ինչպիսին է տրիոլետը։ Քաղաքական հարցեր շոշափելու համար այդ ժանրը անհաջող է, նա հակասություն է ստեղծում ձևի և բովանդակության միջև, իսկ Զարյանի տրիոլետներն այդպիսի հարցեր են շոշափում, նրանց մեջ թերևս ամենից հաջողը՝ 26 կոմիսարներին նվիրված տրիոլետներն են։

Բացի տրիոլետից, նա գրել է նաև քառյակներ՝ նվիրված Լենինականին, կոլխոզ շարժմանը, գարնանացանին, հնձին և դասակարգային պայքարին։

Ինչպես կարելի է նկատել, գրական այս ժանրը ևս, հեղինակը լցրել է սովետական թեմատիկայով ու դաղափարներով։ Նա օգտագործել է պոեզիան սովետական գաղափարներ քարոզելու և հանդես եկել որպես պոետ տրիբուն։

3

Ո՞րն է Ն. Զարյանի առաջին շրջանի (1922—1930) ստեղծագործությունների նշանակությունը, նրանց առավելություններն ու թերությունները։

Ամենից առաջ Զարյանի թեմատիկան նոր էր իր քաղաքական սուր բովանդակությամբ։ Այդ թեմատիկան ռևոլյուցիոն անցյալը և սովետական կյանքն էր ընդգրկում։ Հեղինակը փորձել է պատկերել նոր հերոսին՝ ռևոլյուցիոներ բոլշևիկի կերպարը՝ արիությամբ ու կոմունիզմի գործի նկատմամբ ունեցած վառ, անխորտակելի հավատով։ Քաղաքականությամբ համակված այդ թեմայի ընտրությունն արդեն խոսում էր հեղինակի գաղափարական նպատակասլացության մասին։ Բայց միշտ չէ, որ թեման և երկի գաղափարականությունը համընկնում են, լրացնում իրար և ստեղծում մի ներդաշնակ ամբողջություն։ Զարյանն ունեցել է շեղումներ այդ հարցում («Նոյեմբերյան օրերը» և այլն), բայց հիմնականում թեմայի ընտրությունը նրա մոտ պայմանավորված է գաղափարական նպատակասլացությամբ և ներդաշնակել է հեղինակի առողջ ձգտմանը, սովետական կյանքի հետ քայլելու նրա մտադրությունը։ Այդ ռևոլյուցիոն թեմատիկան իր հերոսներով նորություն էր հայ գրականության մեջ և արձագանքում էր սովետական կարգերի համար պայքարող մասսաների տրամադրությանը, արձագանքում էր նրանց խանդավառությանը։ Այդ գրականությունը դաստիարակում էր արիություն և սովորեցնում էր լինել գաղափարական, անձնուրաց, կռվել ռևոլյուցիայի, կոմունիզմի մեծ գաղափարների համար, ինչպես արիաբար կռվում ու մեռնում էին քաղաքացիական կռվի հերոսները։ Նաիրի Զարյանի այդ տիպի գրվածքների դաստիարակչական նշանակությունը կասկածից վեր էր։ Ընթերցողները պատրաստ են ներել հեղինակին դեղարվեստական շատ անկատարելիություններ, երբ տեսնում են նրա գրվածքների մեջ իրենց հուզող գաղափարների արտահայտություն և իրենց սրտին մոտ հերոսների կերպարների նկարագրություն։

Այդպիսի գրվածքները, որտեղ նկարագրված է ռևոլյուցիոն անձնվիրությունը, անկախ նրանց գրական թերություններից, ուժեղ տպավորություն է թողնում սովետական ընթերցողների վրա։

Պատմում են, որ «Հրանուշ» պոեմը հեղինակի արտասանությամբ, մեծ հետաքրքրություն էր առաջացնում ունկնդիրների մեջ և արժանանում նրանց խանդավառ ընդունելությանը։

Պետք է նկատի ունենալ, որ սովետական ընթերցողն իր հիմնական մասսայով նոր էր հաղորդակից դառնում գրականության ու կուլտուրայի նվաճումներին։ Նա այն ժամանակ դեռ հնարավորություն չուներ մտնելու գրական նրբությունների մեջ և որպեսզի պահանջ դներ այնպես, ինչպես անում է այսօրվա մեր ընթերցողը։ Այն ժամանակ, եթե նույնիսկ նկատում էլ էր գրական թերություններ, աշխատում էր ներողամիտ լինել նոր զարգացող, երիտասարդ սովետական հեղինակների նկատմամբ և պաշտպանել ու արձագանքել նրանց

հիմնական առողջ գաղափարական տենդենցին, քաղաքական բովանդակությանը, նորի ու ռևոլյուցիայի, սովետականի նկատմամբ արտահայտված նվիրվածության գաղափարին։

Սովետական հասարակարգի զարգացման, սոցիալիզմի հաղթանակների հետ միասին աճեց ու զարգացավ ոչ միայն սովետական գրականությունը, այլև սովետական ընթերցողը, որն այսօր առաջադրում է իր նոր ու բարձր պահանջները՝ սովետական արվեստին ու գրականությանը, պայքարելով գրողների հետ միասին նրանց բարձր գաղափարականության ու արվեստի կատարելության համար.

Ո՞րն էր այդ շրջանի սովետական, պրոլետարական գրականության հիմնական գրական թերությունը, որի դեմ էլ կենտրոնացվում էր պարտիական քննադատության կրակը։

Եթե մի կողմ թողնենք գաղափարական սայթաքումների ու խորթ գաղափարախոսության արտահայտությունների անխնա քննադատությունը, որն ինքնըստինքյան հասկանալի է, ապա կարող ենք ասել՝ սովետական գրականությունն ընդհանրապես և Ն. Զարյանի վաղ շրջանի ստեղծագործությունները՝ մասնավորապես, տառապում էին մի հիմնական թերությամբ՝ սխեմատիզմով։

Ժամանակին, գաղտնիք չէ, որ շատ են խոսել Զարյանի պոեզիայի սխեմատիզմի մասին, հաճախ չափազանցնելով այն։ Սակայն այդ մասին խոսողները չեն բարեհաճել բացատրել գրական սխեմատիզմի պատճառները ոչ միայն Զարյանի ստեղծագործության մեջ, այլև սովետական գրականության մեջ ընդհանրապես։ Սխեմատիզմն այդ շրջանում հատուկ չէր միայն Զարյանի ստեղծագործությանը, դա, կարելի է ասել, ընդհանուր երևույթ էր պրոլետարական գրականության համար՝ նրա զարգացման առաջին շրջանում։ Այդ երևույթի պատճառները տարբեր էր՝ տարբեր գրողների մոտ։ Բայց կար ընդհանուր մի գիծ, որ հատուկ էր շատ հեղինակների։

Ո՞րն էր այդ ընդհանուրը բոլոր հեղինակների համար։

Նոր, սովետական կյանքի և ռևոլյուցիոն անցյալի վատ ճանաչումը և ոչ խոր ուսումնասիրությունը՝ գրական սխեմատիզմի հիմնական պատճառներից մեկն էր։

Մյուս կարևոր պատճառը (թերևս ամենակարևորը) նոր գաղափարների, մարքսիզմ-լենինիզմի հետ ունեցած մակերեսային ծանոթությունն էր, իսկ շատ հաճախ նրա սխալ յուրացումը։ Եվ վերջապես երրորդ պատճառը՝ գրական կուլտուրայի պակասն էր և վարպետության բացակայությունը։ Մեր խոսքն, անկասկած, վերաբերում է գրական երիտասարդ կադրերի հիմնական մասին և ոչ բոլորին։

Ն. Զարյանի ստեղծագործության մեջ արտահայտված սխեմատիզմի հիմքում ընկած են նույն այդ հիմնական պատճառները, դրանց մեջ վճռականը և որոշիչը՝ սովետական գաղափարախոսության ոչ խորը յուրացումն էր։ Սա իր հերթին պայմանավորում է նոր կյանքի և կյանքի նոր երևույթների մակերեսային պատկերացումը։

Ստեղծագործական պրոցեսում Ն. Զարյանը համառ պայքար էր մղում այդ թերությունները վերացնելու համար և նա ժամանակի ընթացքում մեծ հաջողությունների հասավ։ Այդ տարիներին նա հասունանում է ոչ միայն գաղափարապես ու կյանքի ճանաչողությամբ, այլ նաև գրական վարպետությամբ։

Բայց մեր խոսքը վերաբերում է նրա առաջին շրջանի ստեղծագործություններին, որոնց մեջ սխեմատիզմը զգալի տեղ է գրավում։

Ոմանք գրական սխեմատիզմը համարել են գաղափարականության հետևանք։ Մինչդեռ, ինչպես նշեցինք, սխեմատիզմը Զարյանի, ինչպես նաև շատ այլ սովետական գրողների երկերում, արդյունք է գաղափարականության պակասի, այն բանի, որ սովետական գաղափարախոսությունը դեռևս չէր դարձել երիտասարդ հեղինակի համար «միս ու արյուն»։

Այս կապակցությամբ տեղին է հիշել Պլեխանովի մի կարևոր դրույթը՝ «Հենրիկ Իբսեն» հոդվածից։

Խոսելով նորվեգացի մեծ դրամատուրգի մասին, Պլեխանովը ցույց է տվել, որ վերացական, լավ չյուրացված գաղափարները, որոնք քարոզում էր Իբսենը, մտցրել են նրա ստեղծագործությունների մեջ կեղծ դրություններ ու սխեմատիզմ, կերպարների անորոշակիություն։ «Եթե քարոզիչն իր գաղափարների լիակատար տերը չի դարձել, եթե, բացի դրանից, նրա գաղափարները պարզ և հետևողական չեն, ապա գաղափարականությունը վնասակար կերպով կանդրադառնա գեղարվեստական ստեղծագործության վրա. այն ժամանակ նա կմտցնի սառնություն, հոգնածություն և տաղտուկ։ Բայց նկատի ունեցեք, որ այստեղ մեղավորը գաղափարները չեն լինի, այլ դրանք ըմբռնելու գեղարվեստագետի կարողությունը, այն, որ նա այս կամ այն պատճառով մինչև վերջը գաղափարական չի դարձել»։

Դրա հետևանքով էլ Իբսենի ստեղծագործության մեջ «ներխուժել է վերացականության ու սխեմատիզմի տարր»։

Վերափոխելով Պլեխանովի այդ միտքը, մենք կարող ենք ասել, որ սովորական գաղափարախոսությանը լավ չտիրապետելու, լավ չյուրացնելու հետևանքով, վերացականության ու սխեմատիզմի տարր է ներխուժել սովետական գրողների ստեղծագործությունների մեջ և այսօր էլ նրանք պատրաստ են ներխուժելու՝ հիշյալ պայմանի բացականության դեպքում։

Այսպիսով, գաղափարական հետևողականությունն ու որոշակիությունը, խոր գաղափարականությունն իր հերթին պայմանավորում է գեղարվեստական պատկերների որոշակիությունն ու լիակատարությունը։

Եթե Զարյանի առաջին շրջանի ստեղծագործությունների մեջ տեղ են գտել վերացականության ու սխեմատիզմի տարրեր, ապա դրանք բխում են ոչ թե գաղափարականությունից, այլ գաղափարականության պակասից, կյանքը լավ չճանաչելուց։

Պետք է նկատել, սակայն, որ Ն. Զարյանի այդ շրջանի հիմնական ստեղծագործությունները, թերություններով հանդերձ, իրենց առողջ տենդենցով, սովետական հայրենասիրությամբ ունեին հասարակական ու դաստիարակչական նշանակություն։ Մարքսիզմ-լենինիզմի յուրացումը և կյանքի ճանաչողության խորացումը, գրական կուլտուրայի նվաճումների ուսումնասիրությունը կատարեցին իրենց դրական դերը։ Աստիճանաբար հաղթահարելով առաջին շրջանի բնորոշ վերացականության ու սխեմատիզմի տարրերը, Զարյանի ստեղծագործությունը կարգացավ սոցիալիստական ռեալիզմի ուղիով։

Արդեն առաջին շրջանի պոեմներով նա մշակում էր սյուժետային պոեմի ժանրը և կոնկրետ կերպարները կերտելու լուրջ փորձ էր կատարում։ Դա Զարյանի, որպես բանաստեղծի գրական նվաճումն էր։ Այդ պոեմներում, չնայած սխեմատիզմի տարրերին, այնուամենայնիվ, տրված էր կյանքի գծեր, նկատ-

վում էր իրական մարդու կերպար կերտելու, նրա հոգեբանությունը դրսևորելու փորձ։ Լեզուն հղկվում էր, պատկերները որոշակի էին։ Բոլոր տվյալներից երևում էր, որ հեղինակն այդ տարիների ընթացքում աճել էր և ստեղծել նախադրյալներ ստեղծագործական կյանքի նոր, ավելի բարձր շրջան թևակոխելու համար։

Այդ երկրորդ հասուն շրջանը, որի բնորոշ արտահայտությունները հանդիսացան «Ռուշանի քարափը» պոեմը և «Ամրոց» բանաստեղծությունների ժողովածուն, նախապատրաստված էր Զարյանի նախորդ շրջանի ստեղծագործական կյանքով։ «Ռուշանի քարափը», որպես հասարակական ու քաղաքական խոր բովանդակությամբ ռեալիստական պոեմ և 30-ական թվականների լիրիկան, պատահականության արդյունք չէին, հանկարծակի և անսպասելի մի գյուտ։ Բնավ ոչ։ Դրանք իրենց հիմքում ունեին հեղինակի առաջին շրջանի գրական ակտիվը և հանդիսանում էին դրանց տրամաբանական շարունակությունն ու զարգացումը, նոր էտապը։

Ն. Զարյանի գրական կյանքի նոր էտապի, ինչպես նաև Հայրենական Մեծ պատերազմի և հետպատերազմյան շրջանի նրա բազմազան ու հարուստ ստեղծագործության բնութագիրը հատուկ քննության կարիք ունի և չի մտնում ներկա հոդվածի սահմանների մեջ։